# ԿՈԳԵՆԵՐԱՑԻՈՆ ԿԱՅԱՆԻ ՀԱՄԱՐ ՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N «ՄԱԱՊՁԲ-2021/16-ԵՊԲՀ»

ք.Երևան «01» «նոյեմբերի» 2021թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամը ի դեմս ռեկտոր Արմեն Աբգարի Մուրադյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ցեպելին Արմենիա» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Վահան Խորանյանս Մեհրան Նեջադի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 19.899.000,00 /տասնինը միլիոն ութ հարյուր իննսունինը հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ԳՆՈՐԴ**

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական
բժշկական համալսարան Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2
Հեռախոսահամար՝ 060 621 000
Բանկ՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/հ՝ 11500166513800
ՀՎՀՀ՝ 01503448
Ռեկտոր՝ Ա.Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Ցեպելին Արմենիա» ՍՊԸ
Հասցե՝ մ.Կոտայք, ք.Աբովյան
2201, 2-րդ արտադ. թաղ., թիվ 4
Հեռախոսահամար՝ 060 52 00 00
Բանկ՝ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/հ՝ 220113330736000
ՀՎՀՀ՝ 02578482
էլ. հասցե՝ armenia@zeppelin.com
Տնօրեն՝ Վ.Խորանյանս Մեհրան Նաջաղ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1
«01» «11» 2021թ. կնքված
«ՄԱԱՊՁԲ-2021/16-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողի անվանումը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափ ման միա վորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհա նուր քանա կը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթա կա քանա կը | ժամկետը |
| 1 | 30121370 | Ֆիլտր 1059741 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի օդի մաքրման զտիչ | հատ | 305 640,00 | 611 280,00 | 2 | ք. Երևան, Կորյունի 2 | 2 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 2 | 42121530 | Ամորտիզատոր 3013073 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի արտանետման համակարգի կոլեկտորի կողային ամորտիզատոր | հատ | 931 080,00 | 1 862 160,00 | 2 | ք. Երևան, Կորյունի 2 | 2 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 3 | 42121530 | Ամորտիզատոր 2006554 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի արտանետման համակարգի կոլեկտորի ամորտիզատոր | հատ | 742 920,00 | 1 485 840,00 | 2 | ք. Երևան, Կորյունի 2 | 2 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 4 | 31341400 | Խցուկ 3053447 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի արտանետման համակարգի կոլեկտորի խցուկ | հատ | 41 760,00 | 417 600,00 | 10 | ք. Երևան, Կորյունի 2 | 10 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 5 | 44531100 | Մանեկ 3E6916 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի արտանետման համակարգի կոլեկտորի մանեկ, չափը՝ 3/8-16 | հատ | 4 440,00 | 44 400,00 | 10 | ք. Երևան, Կորյունի 2 | 10 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | ընթացքում |
| 6 | 44192630 | Հեղյուս 5L6887 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի արտանետման համակարգի կոլեկտորի հեղյուս, չափսը՝ 3/8-16X5 դյույմ | հատ | 13 440,00 | 134 400,00 | 10 | ք. Երևան, Կորյունի 2 | 10 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 7 | 44531220 | Տափօղակ 8C8491 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի արտանետման համակարգի կոլեկտորի տափօղակ, չափսը՝ 10.2x22x3 մմ | հատ | 1 800,00 | 36 000,00 | 20 | ք. Երևան, Կորյունի 2 | 20 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 8 | 31341400 | Խցուկ 3369992 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի գլանի գլխիկի խցուկների վերանորոգման հավաքածու | հատ | 51 600,00 | 206 400,00 | 4 | ք. Երևան, Կորյունի 2 | 4 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 9 | 42121530 | Տերմինալ Ա 8T9757 | Չինաստան, ԵՄ | Էլեկտրական համակարգի մարտկոցի դրական լիցքավորված տերմինալ | հատ | 15 120,00 | 60 480,00 | 4 | ք. Երևան, Կորյունի 2 | 4 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 10 | 42121530 | Տերմինալ Ա 8C5917 | Չինաստան, ԵՄ | Էլեկտրական համակարգի մարտկոցի դրական լիցքավորված տերմինալ | հատ | 15 000,00 | 60 000,00 | 4 | ք. Երևան, Կորյունի 2 | 4 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 11 | 34311160 | Կայծամոմ 3465123 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի միացման/այրման համակարգի կայծամոմ | հատ | 155 520,00 | 1 555 200,00 | 10 | ք. Երևան, Կորյունի 2 | 10 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 12 | 31121120 | Տրանսֆորմատոր 4385682 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի միացման/այրման համակարգի | հատ | 527 040,00 | 1 581 120,00 | 3 | ք. Երևան, Կորյունի | 3 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | փոխակերպիչ սարք | | | | | 2 | | հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 13 | 31687000 | Վարիստոր 4607022 | Չինաստան, ԵՄ | Էլկտրական համակարգի հաստատուն և փոփոխական հոսանքների պաշտպանիչ վարիստոր | հատ | 196 800,00 | 196 800,00 | 1 | ք. Երևան, Կորյունի 2 | 1 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 14 | 31687000 | Ռեզիստոր 7E0127 | Չինաստան, ԵՄ | Էլկտրական համակարգի հաստատուն և փոփոխական հոսանքների ռեզիստոր | հատ | 41 400,00 | 41 400,00 | 1 | ք. Երևան, Կորյունի 2 | 1 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 15 | 42121530 | Սենսոր 3832981 | Չինաստան, ԵՄ | Էլկտրական համակարգի ջերմաստիճանային ցուցիչ | հատ | 325 440,00 | 650 880,00 | 2 | ք. Երևան, Կորյունի 2 | 2 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 16 | 09211640 | Յուղ OIL NGEO ADV 40, 208L, 3317031 | Չինաստան, ԵՄ | Գազապորշինային շարժիչի յուղ, ԱԴՎ 40 | լիտր | 3 840,00 | 798 720,00 | 208 | ք. Երևան, Կորյունի 2 | 208 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 17 | 34311190 | Միջադիր 1445692 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի գլանի գլխիկի թիթեղի (плита) միջադիր | հատ | 17 160,00 | 34 320,00 | 2 | ք. Երևան, Կորյունի 2 | 2 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 18 | 31341400 | Խցուկ 4200652 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի գլանի գլխիկի ջրապաշտպանիչ խցուկ | հատ | 2 880,00 | 23 040,00 | 8 | ք. Երևան, Կորյունի 2 | 8 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 19 | 31341400 | Խցուկ 4200653 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի գլանի գլխիկի ջրապաշտպանիչ խցուկ | հատ | 3 360,00 | 26 880,00 | 8 | ք. Երևան, Կորյունի 2 | 8 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 20 | 42121530 | Գլանների գլխիկ 4155584 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի գլանի գլխիկի հավաքածու | հատ | 2 232 840,00 | 4 465 680,00 | 2 | ք. Երևան, Կորյունի 2 | 2 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 21 | 34311190 | Միջադիր 5917736 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի գլանի գլխիկի միջադիր | հատ | 36 480,00 | 72 960,00 | 2 | ք. Երևան, Կորյունի 2 | 2 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 22 | 42121530 | Առանցքակալ 1077330 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի մխոցի և միացնող շարժաթևի առանցքակալ | հատ | 134 400,00 | 268 800,00 | 2 | ք. Երևան, Կորյունի 2 | 2 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 23 | 31641221 | Մխոց 4557266 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի մխոցի հավաքածու | հատ | 1 317 000,00 | 2 634 000,00 | 2 | ք. Երևան, Կորյունի 2 | 2 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 24 | 42121530 | Մխոցամատ 1388506 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի մխոցամատ | հատ | 122 760,00 | 245 520,00 | 2 | ք. Երևան, Կորյունի 2 | 2 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 25 | 42121530 | Մխոցաօղ 2236361 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի մխոցաօղ, յուղի | հատ | 48 600,00 | 97 200,00 | 2 | ք. Երևան, Կորյունի 2 | 2 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | օրվա ընթացքում |
| 26 | 31341400 | Խցուկ 8N1234 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի մխոցի միջանկյալ խցուկ | հատ | 48 600,00 | 97 200,00 | 2 | ք. Երևան, Կորյունի 2 | 2 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 27 | 42121530 | Կառանիչ օղ 1W4188 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի մխոցի կառանիչ օղ | հատ | 29 880,00 | 59 760,00 | 2 | ք. Երևան, Կորյունի 2 | 2 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 28 | 44163150 | Խողովակ 2600135 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի մխոցի յուղի ներարկման խողովակ | հատ | 69 240,00 | 138 480,00 | 2 | ք. Երևան, Կորյունի 2 | 2 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 29 | 42121530 | Օղակ 3429087 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի մխոցի գլխիկի օղակ | հատ | 49 800,00 | 99 600,00 | 2 | ք. Երևան, Կորյունի 2 | 2 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 30 | 42121530 | Կառանիչ օղ 8N7296 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի մխոցամատի ամրացման կառանիչ օղ | հատ | 5 520,00 | 22 080,00 | 4 | ք. Երևան, Կորյունի 2 | 4 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 31 | 34311190 | Միջադիր 8N4707 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի գլանի ժապավենային միջադիր | հատ | 4 800,00 | 9 600,00 | 2 | ք. Երևան, Կորյունի 2 | 2 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 32 | 31341400 | Խցուկ 7N2046 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի գլանի միջնաշերտի շրջանաձև խցուկ | հատ | 5 160,00 | 30 960,00 | 6 | ք. Երևան, Կորյունի | 6 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | 2 | | հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 33 | 42121530 | Մխոցի միջնաշերտ 2117826 | Չինաստան, ԵՄ | Շարժիչի գլանի միջնաշերտ | հատ | 267 600,00 | 535 200,00 | 2 | ք. Երևան, Կորյունի 2 | 2 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| 34 | 31442240 | Մարտկոց 1535710 | Չինաստան, ԵՄ | Էլեկտրական համակարգի մարտկոց, 12 Վ, 200 Ա/ժ | հատ | 323 760,00 | 1 295 040,00 | 4 | ք. Երևան, Կորյունի 2 | 4 | պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 աշխատանքային օրվա ընթացքում |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | **19 899 000,00** | | | | |

**ԳՆՈՐԴ**
Երևանի Մխիթար Հերացու անվան պետական
բժշկական համալսարան Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2
Հեռախոսահամար՝ 060 621 000
Բանկ՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/հ՝ 11500166513800
ՀՎՀՀ՝ 01503448
Ռեկտոր՝ Մ.Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Ցեպելին Արմենիա» ՍՊԸ
Հասցե՝ մ.Կոտայք, ք.Աբովյան
2201, 2-րդ արտադ. թաղ., թիվ 4
Հեռախոսահամար՝ 060 52 00 00
Բանկ՝ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/հ՝ 220113330736000
ՀՎՀՀ՝ 02578482
Էլ. հասցեն՝ armenia@zeppelin.com
Տնօրեն՝ Վ.Խորանյանս Մեհրան Նաջադ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 01 » « 11 » 2021թ. կնքված
«ՄԱԱՊՁԲ-2021/16-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին` ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 30121370 | Ֆիլտր 1059741 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 611 280,00 | 611 280,00 |
| 2 | 42121530 | Ամորտիզատոր 3013073 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 1 862 160,00 | 1 862 160,00 |
| 3 | 42121530 | Ամորտիզատոր 2006554 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 1 485 840,00 | 1 485 840,00 |
| 4 | 31341400 | Խցուկ 3053447 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 417 600,00 | 417 600,00 |
| 5 | 44531100 | Մանեկ 3E6916 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 44 400,00 | 44 400,00 |
| 6 | 44192630 | Հեղյուս 5L6887 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 134 400,00 | 134 400,00 |
| 7 | 44531220 | Տափօղակ 8C8491 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 36 000,00 | 36 000,00 |
| 8 | 31341400 | Խցուկ 3369992 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 206 400,00 | 206 400,00 |
| 9 | 42121530 | Տերմինալ Ա 8T9757 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 60 480,00 | 60 480,00 |
| 10 | 42121530 | Տերմինալ Ա 8C5917 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 60 000,00 | 60 000,00 |
| 11 | 34311160 | Կայծամոմ 3465123 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 1 555 200,00 | 1 555 200,00 |
| 12 | 31121120 | Տրանսֆորմատոր 4385682 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 1 581 120,00 | 1 581 120,00 |
| 13 | 31687000 | Վարիստոր 4607022 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 196 800,00 | 196 800,00 |
| 14 | 31687000 | Ռեզիստոր 7E0127 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 41 400,00 | 41 400,00 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15 | 42121530 | Սենսոր 3832981 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 650 880,00 | 650 880,00 |
| 16 | 09211640 | Յուղ OIL NGEO ADV 40, 208L, 3317031 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 798 720,00 | 798 720,00 |
| 17 | 34311190 | Միջադիր 1445692 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 34 320,00 | 34 320,00 |
| 18 | 31341400 | Խցուկ 4200652 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 23 040,00 | 23 040,00 |
| 19 | 31341400 | Խցուկ 4200653 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 26 880,00 | 26 880,00 |
| 20 | 42121530 | Գլանների գլխիկ 4155584 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 4 465 680,00 | 4 465 680,00 |
| 21 | 34311190 | Միջադիր 5917736 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 72 960,00 | 72 960,00 |
| 22 | 42121530 | Առանցքակալ 1077330 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 268 800,00 | 268 800,00 |
| 23 | 31641221 | Մխոց 4557266 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 2 634 000,00 | 2 634 000,00 |
| 24 | 42121530 | Մխոցամատ 1388506 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 245 520,00 | 245 520,00 |
| 25 | 42121530 | Մխոցաօղ 2236361 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 97 200,00 | 97 200,00 |
| 26 | 31341400 | Խցուկ 8N1234 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 97 200,00 | 97 200,00 |
| 27 | 42121530 | Կառանիչ օղ 1W4188 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 59 760,00 | 59 760,00 |
| 28 | 44163150 | Խողովակ 2600135 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 138 480,00 | 138 480,00 |
| 29 | 42121530 | Օղակ 3429087 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 99 600,00 | 99 600,00 |
| 30 | 42121530 | Կառանիչ օղ 8N7296 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 22 080,00 | 22 080,00 |
| 31 | 34311190 | Միջադիր 8N4707 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 9 600,00 | 9 600,00 |
| 32 | 31341400 | Խցուկ 7N2046 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 30 960,00 | 30 960,00 |
| 33 | 42121530 | Մխոցի միջնաշերտ 2117826 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 535 200,00 | 535 200,00 |
| 34 | 31442240 | Մարտկոց 1535710 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 1 295 040,00 | 1 295 040,00 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ | «Ցեպելին Արմենիա» ՍՊԸ |
| Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2 | Հասցե՝ մ.Կոտայք, ք.Աբովյան 2201, 2-րդ արտադ. թաղ., թիվ 4 |
| Հեռախոսահամար՝ 060 621 000 | Հեռախոսահամար՝ 060 52 00 00 |
| Բանկ՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ | Բանկ՝ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ |
| Հ/հ՝ 11500166513800 | Հ/հ՝ 220113330736000 |
| ՀՎՀՀ՝ 01503448 | ՀՎՀՀ՝ 02578482 |
| | էլ. հասցեն՝ armenia@zeppelin.com |
| Ռեկտոր՝ Ա.Մուրադյան | Տնօրեն՝ Վ.Խորանյանս Մեհրան Նաջադ |
| ------------------------- /ստորագրություն/ Կ.Տ | ------------------------- /ստորագրություն/ Կ.Տ |

Հավելված N 3.1
« » « » 2021թ. կնքված
«ՄԱԱՊՁԲ-2021/16-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Գնորդ) և _______________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _______________ -ին կնքված N _______________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _______________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

_______________
ազգանուն, անուն
_______________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_______________
ազգանուն, անուն
_______________
ստորագրություն

Հավելված N 3
« » « » 2021թ. կնքված
«ՄԱԱՊՁԲ-2021/16-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
hh ___________________________
hվhh _________________________

Պատվիրատու
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
hh___________________________
hվhh_________________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.